ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՇՁԲ-10/4-1

ք.Երևան «04» մայիսի 2018 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից, և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ե. Գևորգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կապալառու, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում սույն պայմանագրին կից կնքվող համաձայնագրով: Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ համաձայն հաստատված թերությունների ակտերի: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, որից 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն ընտրված մասնակցի կողմից գնային առաջարկով աշխատանքների համար սահմանված միավորի գների հանրագումար նշված գինն է, **որը կազմում է 4,596,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն,**

ՆԳ-ն Պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ծավալաթերթով նախատեսված աշխատանքների համար սահմանված միավորի նախահաշվային գների հանրագումար նշված գինն է, **որը կազմում է 4,972,720 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն,**

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21/26
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ 900011117034	Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00440841
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված թիվ 1
ԲՄԱՇՁԲ-10/4-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
(Արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրում CPV կոդ՝ 09331400/303)

Հ/հ	Հիմնա-վորումը	Աշխատանքի (ծառայության) անվանումը	Չ/Մ	Միավորի պլանավորված գինը հազ.դրամ
	Արևային ջրատաքացուցիչների տեղադրում			
1	գնային առաջարկ	Արևային հորիզոնական, անջատ, վակումային ջրատաքացուցիչ սաքավորման տեղադրում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	52.61
2	գնային առաջարկ	Արևային հորիզոնական, անջատ, վակումային ջրատաքացուցիչ սաքավորում, իր հենակալման սարքվածքներով (զանգվածը դատարկ 150կգ, հզոր. 4,0կվտ, տարողությունը 140լ) /արժեքը/	լրակազմ	560.00
3	գնային առաջարկ	Հսկիչ ղեկավարման վահանակի տեղադրում կամ փոխարինում TK-SC6 /առանց արժեքի/	լրակազմ	7.55
4	գնային առաջարկ	Հսկիչ ղեկավարման վահանակ TK-SC6 /արժեքը/	հատ	30.00
5	գնային առաջարկ	Արևային թերմոսիֆոն, պարզ, վակումային ջրատաքացուցիչ սաքավորման տեղադրում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	36.35
6	գնային առաջարկ	Արևային թերմոսիֆոն, պարզ, վակումային ջրատաքացուցիչ սաքավորում, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	400.00
7	գնային առաջարկ	Հսկիչ ղեկավարման վահանակի տեղադրում կամ փոխարինում TK-7 /առանց արժեքի/	լրակազմ	7.55
8	գնային առաջարկ	Հսկիչ ղեկավարման վահանակ TK-7 /արժեքը/	հատ	15.00
9	գնային առաջարկ	Արևային ջրատաքացուցիչի խողովակ-անոթի փոխարինում /երկար. 1,8մ, տրամագիծը 58մմ չափի/	հատ	7.55
10	գնային առաջարկ	Կուտակային 2 ջերմափոխանակիչով, 150լ բաքի տեղադրում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	22.43
11	գնային առաջարկ	Կուտակային 2 ջերմափոխանակիչով, 150լ բաք, տեն 2կվտ հզոր., իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	220.00
12	գնային առաջարկ	2կվտ հզոր. տենի փոխարինում	լրակազմ	11.78
13	գնային առաջարկ	Ընդարձակման թերմոխառնիչ բաքի տեղադրում, 30լ /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	7.82
14	գնային առաջարկ	Ընդարձակման թերմոխառնիչ բաք, 30լ, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	32.00
15	գնային առաջարկ	Շրջանառու պոմպի տեղադրում /առանց պոմպի արժեքի/	լրակազմ	12.76
16	գնային առաջարկ	Շրջանառու պոմպի նորոգում	լրակազմ	17.86
17	գնային առաջարկ	Շրջանառու պոմպ, 25/6 H=6մ 60լ/րոպե, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	70.63
18	գնային առաջարկ	Շրջանառու պոմպ, 30/6 H=6մ 60լ/րոպե, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	79.03
19	գնային առաջարկ	Շրջանառու պոմպ, 30/7 H=6մ 120լ/րոպե, իր հենակալման սարքվածքներով /արժեքը/	լրակազմ	150.00
20	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային ալումինե շերտով Φ50մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	10.33
21	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային ալումինե շերտով Φ40մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	8.05
22	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային ալումինե շերտով Φ32մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	5.85
23	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային ալումինե շերտով Φ25մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	4.79
24	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային ալումինե շերտով Φ20մմ, PN10, խողովակի մոնտաժում և մեկուսացում իր պոլիպրոպիլենային ձևավոր մասերով	գծմ	4.36
25	գնային առաջարկ	Φ15-50մմ փականների տեղադրում /առանց արժեքի/	հատ	3.45
26	գնային առաջարկ	Փական Φ15մմ /արժեքը/	հատ	2.43
27	գնային առաջարկ	Փական Φ20մմ /արժեքը/	հատ	2.82
28	գնային առաջարկ	Փական Φ25մմ /արժեքը/	հատ	3.55
29	գնային առաջարկ	Փական Φ32մմ /արժեքը/	հատ	6.82
30	գնային առաջարկ	Փական Φ40մմ /արժեքը/	հատ	9.98
31	գնային առաջարկ	Փական Φ50մմ /արժեքը/	հատ	13.63
32	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային փական Φ20մմ /արժեքը/	հատ	1.86
33	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային փական Φ25մմ /արժեքը/	հատ	1.99
34	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային փական Φ32մմ /արժեքը/	հատ	3.12
35	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային փական Φ40մմ /արժեքը/	հատ	6.42
36	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենային փական Φ50մմ /արժեքը/	հատ	8.64
37	գնային առաջարկ	Պոլիպրոպիլենից-լատուն 20-32մմ ձևավոր մասեր/արժեքը/	հատ	0.79
38	գնային առաջարկ	Խողովակների միացում գոյություն ունեցող ջեռուցման և ջրամատակարարման ներքին ցանցի խողովակաշարերին, 50մմ տրամագծով	տեղ	13.30
39	գնային առաջարկ	Խողովակների միացում գոյություն ունեցող ջեռուցման և ջրամատակարարման ներքին ցանցի խողովակաշարերին, 15-40մմ տրամագծով	տեղ	10.30
40	գնային առաջարկ	Մալուխի մոնտաժում ՊՎՀ 3*2,5մմ² կտր./բաց տեղադրմամբ/	100մ	98.81
41	գնային առաջարկ	Խողովակի հակասառեցման լարի մոնտաժում	մ	1.00
42	գնային առաջարկ	Միաֆազ ավտոմատ էլ. անջատիչ 25Ա ըստ խզման հոսանքի	հատ	3.78
43	գնային առաջարկ	Միաֆազ ավտոմատ էլ. անջատիչ 16Ա ըստ խզման հոսանքի	հատ	3.78
44	գնային առաջարկ	Սարքավորումների տեղափոխման ծախսեր /մեկ համակարգի մոնտաժման համար/	լրակազմ	79.99
	Արևային ֆոտովոլտային համակարգի տեղադրում			0

45	գնային առաջարկ	Արևային ֆոտովոլտային մեկ վահանակի մոնտաժում իր տեղակայման կառուցատարրերով /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	6.151
46	գնային առաջարկ	Արևային ֆոտովոլտային մեկ վահանակի փոխարինում /առանց սարքավորման արժեքի/	հատ	6.151
47	գնային առաջարկ	Արևային ֆոտովոլտային համակարգ, իր հենակալման սարքվածքներով (մոնոկրիստալային, 60 բջիջ, 280վտ, հզորության հավելյալ պաշար 7-8 Վտ, ՕԳԳ 17,11%) /արժեքը/	լրակազմ	80.358
48	գնային առաջարկ	Արևային ֆոտովոլտային համակարգ, իր հենակալման սարքվածքներով (պոլիկրիստալային, 60 բջիջ, 270վտ, հզորության հավելյալ պաշար 7-8 Վտ, ՕԳԳ 16,5%) /արժեքը/	լրակազմ	80.358
49	գնային առաջարկ	Արևային ֆոտովոլտային համակարգ, իր հենակալման սարքվածքներով (պոլիկրիստալային, 60 բջիջ, 265վտ, հզորության հավելյալ պաշար 7-8 Վտ, ՕԳԳ 16,5%) /արժեքը/	լրակազմ	78.87
50	գնային առաջարկ	Փոխակերպիչի մոնտաժում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	8.201
51	գնային առաջարկ	Փոխակերպիչ (ցանցից անկախ, 1 կՎտ 12/~230Վ) /արժեքը/	լրակազմ	132.309
52	գնային առաջարկ	Փոխակերպիչ (ցանցից անկախ, 24/~230Վ) /արժեքը/	լրակազմ	154.874
53	գնային առաջարկ	Փոխակերպիչ (ցանցից անկախ, 2 կՎտ 48/~230Վ) /արժեքը/	լրակազմ	226.516
54	գնային առաջարկ	Լիցքավորիչի մոնտաժում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	8.201
55	գնային առաջարկ	Լիցքավորիչ (ցանցից անկախ, 24Վ, 20Ա) /արժեքը/	լրակազմ	43.473
56	գնային առաջարկ	Լիցքավորիչ (ցանցից անկախ, 12/24/48Վ, 30Ա) /արժեքը/	լրակազմ	62.118
57	գնային առաջարկ	Լիցքավորիչ (ցանցից անկախ, 12/24/48Վ, 40Ա) /արժեքը/	լրակազմ	68.435
58	գնային առաջարկ	Լիցքավորիչ (ցանցից անկախ, 12/24/48Վ, 60Ա) /արժեքը/	լրակազմ	74.500
59	գնային առաջարկ	Մարտկոցի մոնտաժում /առանց սարքավորման արժեքի/	լրակազմ	4.818
60	գնային առաջարկ	Մարտկոց (հեղուկային, խորը ցիկլով սպասարկում պահանջով 24Վ, 40 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	43.134
61	գնային առաջարկ	Մարտկոց (AGM, 12Վ, 40 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	53.467
62	գնային առաջարկ	Մարտկոց (AGM, 12Վ, 60 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	68.432
63	գնային առաջարկ	Մարտկոց (AGM, 12Վ, 80 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	85.742
64	գնային առաջարկ	Մարտկոց (AGM, 12Վ, 100 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	108.423
65	գնային առաջարկ	Մարտկոց (AGM, 12Վ, 120 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	126.524
66	գնային առաջարկ	Մարտկոց (AGM, 12Վ, 200 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	224.664
67	գնային առաջարկ	Մարտկոց (GEL, 12Վ, 40 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	58.814
68	գնային առաջարկ	Մարտկոց (GEL, 12Վ, 60 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	74.591
69	գնային առաջարկ	Մարտկոց (GEL, 12Վ, 80 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	92.602
70	գնային առաջարկ	Մարտկոց (GEL, 12Վ, 100 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	116.013
71	գնային առաջարկ	Մարտկոց (GEL, 12Վ, 120 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	135.381
72	գնային առաջարկ	Մարտկոց (GEL, 12Վ, 200 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	233.65
73	գնային առաջարկ	Մարտկոց (GEL, 12Վ, 240 Ա*ժ) /արժեքը/	լրակազմ	252.342
74	գնային առաջարկ	Միաբևեռ, միաֆազ ավտոմատ անջատիչ 10 Ա	հատ	1.725
75	գնային առաջարկ	Միաբևեռ, միաֆազ ավտոմատ անջատիչ 16 Ա	հատ	2.568
76	գնային առաջարկ	Միաբևեռ, միաֆազ ավտոմատ անջատիչ 25 Ա	հատ	2.568
77	գնային առաջարկ	Միաբևեռ, միաֆազ ավտոմատ անջատիչ 50 Ա	հատ	4.37
78	գնային առաջարկ	Միաբևեռ, միաֆազ ավտոմատ անջատիչ 63 Ա	հատ	4.37
79	գնային առաջարկ	Էլեկտրական հաղորդալար պղնձե 1*4մմ² կտր. մոնտաժում /առանց էլ. հաղորդալարի արժեքի/	գծմ	0.103
80	գնային առաջարկ	Էլեկտրական հաղորդալար պղնձե 1*4մմ² կտր. /արժեքը/	գծմ	0.336
81	գնային առաջարկ	Մալուխի՝ պղնձե 3*4մմ² կտր. մոնտաժում /առանց մալուխի արժեքի/	գծմ	0.169
82	գնային առաջարկ	Մալուխ պղնձե 3*4մմ² կտր. /արժեքը/	գծմ	0.588
83	գնային առաջարկ	Էլեկտրական հաղորդալար պղնձե 1*6մմ² կտր. մոնտաժում /առանց էլ. հաղորդալարի արժեքի/	գծմ	0.103
84	գնային առաջարկ	Էլեկտրական հաղորդալար պղնձե 1*6մմ² կտր. /արժեքը/	գծմ	0.414
85	գնային առաջարկ	Մալուխի՝ պղնձե 3*6մմ² կտր. մոնտաժում /առանց մալուխի արժեքի/	գծմ	0.169
86	գնային առաջարկ	Մալուխ պղնձե 3*6մմ² կտր. /արժեքը/	գծմ	0.784
87	գնային առաջարկ	Միակցիչ MC4 4մմ /արժեքը/	լրակազմ	1.291
88	գնային առաջարկ	Սարքավորումների տեղափոխման ծախսեր /մեկ համակարգի մոնտաժման համար/	լրակազմ	82.01
89	գնային առաջարկ	Հիմնակառուցվածք ֆոտովոլտային վահանակի (մեկ վահանակի հաշվարկով)	լրակազմ	8.614
90	գնային առաջարկ	Հիմնակառուցվածք դեկավարման վահանի	լրակազմ	15.675
91	գնային առաջարկ	Հիմնակառուցվածք կուտակիչ մարտկոցների (մեկ մարտկոցի հաշվարկով)	լրակազմ	2.317
92	գնային առաջարկ	Ղեկավ. վահան, պլ. արկղ 500x400x200 մմ	լրակազմ	17.25
93	գնային առաջարկ	Ղեկավ. վահան, պլ. արկղ 600x400x200 մմ	լրակազմ	20.125
94	գնային առաջարկ	Ղեկավ. վահան, պլ. արկղ 800x600x200 մմ	լրակազմ	28.75
95	գնային առաջարկ	Հաղորդաձող տանր միաֆազ	հատ	0.115
96	գնային առաջարկ	Պտուտակային սեղմակներ 125 Ա, 2x15	հատ	5.175
97	գնային առաջարկ	DIN ձող	գծմ	1.725
98	գնային առաջարկ	Պտուտակային սեղմակներ DIN ձողի 4 քմմ	հատ	0.230
99	գնային առաջարկ	Պտուտակային սեղմակներ DIN ձողի 6 քմմ	հատ	0.345
100	գնային առաջարկ	Պտուտակային սեղմակներ DIN ձողի 10 քմմ	հատ	0.460
101	գնային առաջարկ	Մալուխի ծայրակալ մեկուսիչով "I"-աձև 4 քմմ	հատ	0.014
102	գնային առաջարկ	Մալուխի ծայրակալ մեկուսիչով "I"-աձև 6 քմմ	հատ	0.017
103	գնային առաջարկ	Մալուխի ծայրակալ մեկուսիչով "I"-աձև 10 քմմ	հատ	0.023
104	գնային առաջարկ	Մալուխի ծայրակալ մեկուսիչով "I"-աձև 16 քմմ	հատ	0.035
105	գնային առաջարկ	Մալուխի ծայրակալ մեկ.-ով, "O"-աձև 4-6 քմմ, ø6 մմ	հատ	0.058
106	գնային առաջարկ	Մալուխի ծայրակալ "O"-աձև 6 քմմ, ø6 մմ	հատ	0.081

107	գնային առաջարկ	Մալուխի ծայրակալ "O"-աձև 25 քմմ, ø10 մմ	հատ	0.230
108	գնային առաջարկ	Ինքնաշաղափվող պտուտակ 3.9x25 մմ	հատ	0.014
109	գնային առաջարկ	Ինքնաշաղափվող պտուտակ տափօղակով	հատ	0.008
110	գնային առաջարկ	Հեղույս M6x40	հատ	0.015
111	գնային առաջարկ	Հեղույս M8x15	հատ	0.017
112	գնային առաջարկ	Հեղույս M10x20	հատ	0.035
113	գնային առաջարկ	Հեղույս M10x30	հատ	0.046
114	գնային առաջարկ	Մանեկ M6	հատ	0.006
115	գնային առաջարկ	Մանեկ M8	հատ	0.012
116	գնային առաջարկ	Տափօղակ 6x16 մմ	հատ	0.008
117	գնային առաջարկ	Տափօղակ 8x16 մմ	հատ	0.016
118	գնային առաջարկ	Տափօղակ 10x20 մմ	հատ	0.007
119	գնային առաջարկ	Տափօղակ զսպանակային 6 մմ	հատ	0.009
120	գնային առաջարկ	Տափօղակ զսպանակային 8 մմ	հատ	0.014
121	գնային առաջարկ	Ջերմանստեցվող մեկուսիչ տոփինձով	հատ	1.840
122	գնային առաջարկ	Մեկուսիչ ժապավեն	հատ	0.207
123	գնային առաջարկ	Նեյլոնային ձգիչներ 3.6x200 մմ	տուփ	1.15
124	գնային առաջարկ	Նեյլոնային ձգիչների հիմք	տուփ	2.875
125	գնային առաջարկ	Վարդակային խրոցակ 250 Վ, 16 Ա	հատ	0.345
126	գնային առաջարկ	Երկտեղանոց վարդակ, արտաքին տեղ., 250 Վ, 16 Ա	հատ	0.92
127	գնային առաջարկ	Կուտակիչ մարտկոցի սեղմակ	զույգ	1.15
128	գնային առաջարկ	Ծալքախողովակ ՊՎՔ-ից ø25 մմ ուլտրամանուշակագույն ճառագայթների հանդեպ դիմացկուն	մ	0.322
129	գնային առաջարկ	Մալուխի սակառ 40x25 մմ, 2 մ	հատ	1.035
		ԸՆԴԱՄԵՆԸ		4972.72

Աշխատանքներն իրականացվելու են ՀՀ ՊՆ զորամասերում ՝ նախատեսված առավելագույն գների սահմաններում, համաձայն հաստատված թերությունների ակտերի և համաձայնեցված գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի:

Հավելված թիվ 2
ԲՄԱՇՁԲ-10/4-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը /առավելագույն գինը/ (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրում CPV կոդ՝ 09331400/303	30,000,000	Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում	

Աշխատանքներն իրականացվելու են ՀՀ ՊՆ զորամասերում՝ առավելագույն գնի սահմաններում, համաձայն հաստատված թերությունների ակտերի և համաձայնեցված գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի:

Հավելված թիվ 3
ԲՄԱՇՁԲ-10/4-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Պայմանագրային գին (առավելագույն) /դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել՝ համապատասխան ֆինանսական միջոցի առկայության դեպքում
1	Արևային էներգիայի ստացման համակարգերի տեղադրում CPV կոդ՝ 09331400/303	30,000,000	30,000,000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԹԿ

Ռ Ա Ֆ Ա Ելյան

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
տնօրեն

Գևորգյան

Հավելված թիվ 4
ԲՄԱՇՁԲ-10/4-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
ԲՄԱՇՁԲ-10/4-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԱՇՁԲ-10/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **28 -ը հունիսի 2018 թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝այսուհետև Պատվիրատու, մի կողմից և և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ե. Գևորգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կապալառու, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 04.05.18թ. կնքված № ԲՄԱՇՁԲ-10/4-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Աշխատանքների գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկ և վճարման ժամանակացույց՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Կապալառուն պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել սույն Համաձայնագրով նախատեսված շինարարական աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք) համաձայն № 1 Հավելվածով սահմանված Աշխատանքների գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի և Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքի արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Աշխատանքների կատարումն իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից Կապալառուին ներկայացվելիք հայտերի հիման վրա:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է 30,000,000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, որից 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Պատվիրատուն կատարած Աշխատանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 5.3 և 5.4 կետերով նախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 25.12.2018թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Աշխատանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Նուբարաշեն [illegible] 21/26
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հայբիզնեսբանկ [illegible]
Հ/հ 900011117034	Հ/Հ 115003[illegible]479000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00[illegible]6841
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ե. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 1
N ԲՄԱՇՁԲ-10/4-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ (ԿԱՏԱՐՄԱՆ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ - ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Հ/հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքի անվանում	Ծավալը /առավելագույն գինը/ (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը
1	Արևային էներգիայի ստացման համկարգերի տեղադրում	30,00,000	2018թ. III-IV եռամսյակներ, բայց ոչ ուշ, քան 20.12.2018թ.՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության հայտերի հիման վրա

Աշխատանքներն իրականացվելու են նախատեսված առավելագույն գների սահմաններում, համաձայն հաստատված թերությունների ակտերի և համաձայնեցված գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի:

Հավելված N 2
N ԲՄԱՇՁԲ-10/4-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի առավելագույն գին/դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. , ընդ որում՝					
			Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.18թ
1	Արևային էներգիայի ստացման համկարգերի տեղադրում CPV կոդ՝ 09331400/303/9/1	30,00,000	26,000,000	26,000,000	26,000,000	30,00,000	30,00,000	30,00,000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
տնօրեն

Ե. ԳԵՎՈՐԳՅԱՆ